ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ԾՍ/2020

ք. Երևան «26» 02 2020թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Մովսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՖՎ&Գ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Ղազարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **44 000 000** (քառասունչորս միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցներր Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետով կողմերը սահմանում են, որ սույն պայմանագրի պայմանները կիրառվում են նաև 01.01.2020թ.-ից մինչև սույն պայմանագրի ուժի մեջ մտնելը իրենց միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ոստիկանություն	<<ՖՎ&Գ>> ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 130	ք. Երևան, Ազատության 24, 4 շինություն
ՀՀ Ֆինանսների նախարարության	<< ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ>> ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 25000105200110
Հ/Հ 900011021947	ՀՎՀՀ 03004979
ՀՎՀՀ 01533334	
Գլխ. հաշ. 59-60-21	
էլ. փոստ: polidet@polmner@mail.ru	
Ա. Մովսիսյան	Վ. Ղազարյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/	/տնօրեն/
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 2
<<26>> <<02>> 2020թ. կնքված
N ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ԾՍ/2020 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1.	72261160/2	**Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ**		8800000	8800000	19800000	19800000	19800000	30800000	30800000	30800000	44 000 000	44 000 000	44 000 000	**44 000 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011021947
ՀՎՀՀ 01533334
տել. 69-60-21
Էլ. փոստ police_grumner@mail.ru

Վ. Մոլչիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

<<ՖՎ&Գ>> ՍՊԸ
ք. Երևան, Ազատության 24, 4 շինություն
<< ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 25000105200110
ՀՎՀՀ 03004979

Վ. Ղազարյան
/ տնօրեն/
(ստորագրություն)

Հավելված 1
<<26>> << 02 >> 2020թ կնքված
N ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ԾՍ/2020 գնման պայմանագրի

Տեխնիկական բնութագիր – Գնման ժամանակացույց

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկականբնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/
1	72261160/2	**Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ** Ծրագրային ապահովման սպասարկումը ընդգրկում են հետևյալ հիմնական աշխատանքները -Մարզերի կապուղիների սպասարկում Տվյալների փոխանակման համակարգչային գերատեսչական ցանցի կառավարում և սպասարկում 24/7 սխեմայով -Աբոնենտների սարքավորումների սպասարկում (տեխնիկական և ծրագրային ապահովման) թվով 115 հատ -Ոստիկանության գեր. ցանցի միացման կազմա կերպում այլ գերատեսչությունների հետ ցանցային հանգույցների մոնիթորինգ -պատահարների գրանցում և վերլուծություն ցանցի տարբեր հատվածներում գերբեռնվածության ախտորոշում -ցանցային բոլոր ենթակառուցվածքների (կապուղիների,սարքավորումների) մոնիթորինգ -պահուստային կապուղիների անցման մեխանիզմների կառուցում և վերահսկում -ցանցային կառուցվածքի փոփոխություն՝ ըստ կապուղիների ենթակառուցվածքի -կապի համակցում կապի ծառայություն մատուցող ընկերության հետ (VLAN-ների, կապի տեսակի և արագության ուղղությամբ) -VPN մեխանիզմների կիրառում -Հիմնական պահուստային և հակառակ ուղղությամբ կապուղիների անցման մեխանիզմների ներդրում, ցանցային սարքավորումների ծրագրային ապահովումների (IOS) պարբերաբար թարմացում - Պայմանագրի գնի 9.5%-ի չափով 2020թ. ընթացքում վնասված կամ շահագործմանը ոչ պիտանի սարքավորումների փոխարինում նորով (ստորև ներկայացված ցանկից) - տեխնիկականաջակցություն իրականացվում է օրը 24 ժամ, շաբաթական՝ 7օր Երևան քաղաքի տարածքում գտնվող ստորաբաժանումներում ողջամիտ պատճառներով առաջացած խնդիրները պետք է լուծվեն ոչ ուշ, քան 5 ժամվա ընթացքում. - ՀՀ տարածքում գտնվող քաղաքների ստորաբաժանումներում ողջամիտ պատճառներով առաջացած խնդիրները պետք է լուծվեն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում: Ծրագրային ապահովման սպասարկումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում հետևյալ հասցեներով: **Տարածաշրջան** — **Հասցե** 1. Երևան — Նալբանդյան 28 2. Երևան — Մամիկոնյանց 1, Արաբկիրի ՈԲ 3. Երևան — Սարկավագի 48 4. Երևան — Նալբանդյան 130 5. Սյունք — Սյունիքի5/ Նարեկացի 3 6. Սյունք — Կապանի ՈԲ Երկաթուղայինների 4 7. Սյունք — Մեղրիի ՈԲ Զորավար Անդրանիկի 10 8. Սյունք — Սիսիանի ՈԲ, ԳարեգինՆժդեհի 6 9. ՎայոցՁոր — Վայքի ՈԲ, Երիտասարդական 2 10. ՎայոցՁոր — ՈԲ Մեհրաբ 18	դրամ	1	44000000

		13.	Արարատ	Մաշտոցի 8ա – Վաղարշապատի ՈԲ Կամո 15				
		14.	Արագածոտն	Աշտարակի ՈԲ, Տիգրան Մեծ 46				
		15.	Արագածոտն	ՈԲ Գորկու 14				
		16.	Արարատ	Արարատի ՈԲ Շահումյանի 12				
		17.	Արարատ	Արարատի ՈԲ, Չարենցի1				
		18.	Արարատ	Արտաշատի ՈԲ, Շահումյան 20				
		19.	Արարատ	Մասիսի ՈԲ ն, Բաղրամյան 30				
		20.	Կոտայք	Հրազդանի ՈԲ Զորավար Անդրանիկի 5				
		21.	Կոտայք	Չարենցի 12				
		22.	Կոտայք	Չարենցավանի ՈԲ, Շահումյան 1				
		23.	Արարատ	Բաղրամյանի ՈԲԲաղրամյան 2				
		24.	Կոտայք	Շիրակացի 1				
		25.	Շիրակ	Նժդեհի 7 - Պռոշյան 58				
		26.	Շիրակ	Անիի ՈԲ ք.Մարալիկ, Երկաթուղայինների 1				
		27.	Շիրակ	Արթիկի ՈԲ Գորկու 4				
		28.	Տավուշ	Մյասնիկյան 57				
		29.	Լոռի	Տաշիրի ՈԲՊուշկինի 100				
		30.	Լոռի	Սպիտակի ՈԲ Ալեք Մանուկյան 1Ա				
		31.	Լոռի	Ստեփանավանի ՈԲՄ Իլիոնի 37				
		32.	Գեղարքունիկ	Սևանի բաժին, Դեմիրչյան 8				
		33.	Շիրակ	Լոռու ՄՎ Տիգրան Մեծի 1/1				
		34.	Տավուշ	Երևանյան 13				
		35.	Գեղարքունիկ	Մարտունու ՈԲ, Մյասնիկյան 5				
		36.	Գեղարքունիկ	Գավառի բաժին, Սայատյան 91				
		37.	Արմավիր	Մեծամորի ՈԲ Քաղաքապետարանի շենքի հետևը				
		38.	Շիրակ	Ամասիայի ՈԲ ոստիկանության բաժին				
		39.	Շիրակ	Ախուրյանի ՈԲ, Շիրակի 13				
		40.	Շիրակ	Աշոցքի ՈԲ 1 փողոց 12/1 շենք				
		41.	Տավուշ	Տավուշի ՈԲ, ք.Բերդ, ԼևոնԲեկի 12				
		42.	Գեղարքունիկ	Վարդենիսի ՈԲ Ազգալդյան 3				
		43.	Գեղարքունիկ	Ճամբարակի ՈԲ,Գարեգին Նժդեհի 122				
		44.	Վայոցձոր	Ջերմուկի ՈԲ, Մյասնիկյան 3				
		45.	Արագածոտն	Արագածի ՈԲ Բժշկյանց 5				
		46.	Սյունք	ԼՂՀ				
		47.	Տավուշ	Նոյեմբերյանի ՈԲ, Բարեկամության 4				
		48.	Սյունք	Քաջարանի բաժանմունք Աբովյանի 1				
		49.	Շիրակ	Թումանյանի ՈԲ ք.Ալավերդի, Թումանյան 3				
		50.	Արագածոտն	Ապարանի ՈԲ, Գայի 9				
		51.	Սյունք	Անձնագրային սեղան				
		52.	Տավուշ	Անձնագրային սեղան				
		53.	Երևան	ՍիմոնՎրացյան 90				
		54.	Երևան	Ծովակալ Իսակովի 29				
		55.	Երևան	Ահարոնյան 3				
		56.	Երևան	ԳարեգինՆժդեհ 27				
		57.	Երևան	Մովսեսխորենացի 162				
		58.	Երևան	ԱրաՍարգսյան 22				
		59.	Երևան	Շինարարների 10/1				
		60.	Երևան	Բորյան 1				
		61.	Երևան	Արցախի 8/16 ՓՔՎ				
		62.	Երևան	Դավիթաշեն 4-րդթաղամաս, հ.17/10; ԱՎՎ				
		63.	Երևան	Դավիթաշեն 1032 զորամաս ՀՀոստ. Զորքեր				
		64.	Երևան	Խորենացի 158, ՊՊԾ գունդ				
		65.	Երևան	Իսահակյան 2, Ավանի ՈԲ				
		66.	Երևան	Մետրոպոլիտենի պահպ.բաժին Բաղրամյան 76				
		67.	Արագածոտն	ՄՎ ,Երևանյան 1				
		68.	Արմավիրի	Արմավիրի ՄՎ Հանրապետության 22				
		69.	Արարատ	Արարատի ՄՎ, Օգոստոսի 23-122				
		70.	Գեղարքունիկ	Գեղարքունիքի ՄՎ ք.Գավառ, Օգոստոսի 23 շենք 36				
		71.	Շիրակ	Գյումրու ՄուշիՈԲ, Շիրակացի 17				
		72.	Շիրակ	Գյումրու Կումայրիի *Ղորղանյան 91/1*				
		73.	Վայոցձոր	Վայոց Ձորի ՄՎ, Միկոյանի 1				
		74.	Տավուշ	Տավուշի ՄՎ, Մելիքբեկյան 6				
		75.	Սյունք	Սյունիքի ՄՎ Մուշեղ Հարությունյան 1Ա				
		76.	Կոտայք	Կոտայքի ՄՎ,Զորավար Անդրանիկի1				
		77.	Լոռի	Վանաձորի Տարոնի ՈԲ Մխիթարգոշի 3				

80.	Երևան	Նալբանդյան 104	
81.	Երևան	Քանաքեռ 14, 1 շենք	
82.	Երևան	Իսահակովի 25	
83.	Երևան	Բագրատունյաց 6-րդ նրբ	
84.	Արմավիր	Արմավիր, ԱԵԿ	
85.	Տավուշ	Բագրատաշեն, ԵՊԿ շենք Մաքսատուն	
86.	Լոռի	Գոգավան, ԵՊԿշենք Մաքսատուն	
87.	Երևան	Աբովյան 54	
88.	Երևան	Նուբարաշեն 1փ. 13ա	
89.	Տավուշ	Բագրատաշեն 12 փ. 13 շենք	
90.	Երևան	ք.Երևան, Հերացի 5/1	
91.	Երևան	Վարդանանց 69, ԴինամոՄՖՊ	
92.	Տավուշ	Բավրա, մաքսատուն, ԱՎՎ	
93.	Երևան	Շինարարների 10/1	
94.	Երևան	Քաջազնունի 11	
95.	Երևան	Շիրակի 56	
96.	Երևան	Նուբարաշենի խճուղ 14	
97.	Երևան	Զաքարիա Քանաքեռցու 48	
98.	Երևան	Մհեր Մկրտչյան 5	
99.	Երևան	Զվարթնոցաղ. Սահմանային կետ	
100.	Շիրակ	Կայարանամերձ հրպ. Ղանդիլյան փ. շ. 1	
101.	Շիրակ	Շիրա կաղ. Սահմանային կետ	
102.	Տավուշ	Այրում Կայարան սահմանային կետ	
103.	Երևան	Խանջյան 51	

Լրացուցիչ կապուղիների տրամադրում և սպասարկում, այդ թվում լիարժեք ինտեգրում առկա ծրագրային ապահովման համակարգին: Կապուղիների տրամադրվում են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում հետևյալ հասցեներում նշված թողունակությամբ:

	Տարածա-շրջան	Հասցե	Տրամադրված կապուղի Մբիթ/վ
1.	Երևան	Ազատության 24, 4 շինություն	40
2.	Երևան	Ազատության 24, 4 շինություն	40
3.	Երևան	Ազատության 24, 4 շինություն	20
4.	Երևան	Ազատության 24, 4 շինություն	10
5.	Երևան	Նալբանդյան 130	20
6.	Երևան	Նալբանդյան 130	10
7.	Երևան	Շինարարների 10/1	10
8.	Երևան	Քաջազնունի 11	10
9.	Երևան	Շիրակի 56	10
10.	Երևան	Զնքուշի14	10
11.	Երևան	ԶաքարիաՔանաքեռցու (Սարկավագի) 48	10
12.	Երևան	Արցախի պ. (Սասունցի Դ շ. 5 կայարանամերձ - 8/16	10
13.	Երևան	Պռոշյան 1	10
14.	գ. Այրում	Այրում Կայարան սահմանային կետ	10
15.	Երևան	Դավթաշեն 4-րդ թաղ.	20
16.	Երևան	Դավթաշեն 4-րդ թաղ.	10
17.	Երևան	Դավթաշեն 4-րդ թաղ.	10
18.	Երևան	Դավթաշեն 4-րդ թաղ.	10
19.	Բյուրեղավան	ԺԲԿ հանրակացարան	5
20.	Հրազդան	Զորավար Անդրանիկի պող. 1	10
21.	Իջևան	Մելիքբեկյան 5	10
22.	Գավառ	Օգոստոսի 23, 36	10
23.	Եղեգնաձոր	Միկոյան 1	10
24.	Գյումրի	Պռոշյան 58	10
25.	Կապան	ՄուշեղՀարությունյան 1ա	10
26.	Արմավիր	Հանրապետության 22	10
27.	Վանաձոր	ՏիգրանՄեծի պ. 1	10
28.	գ. Փարաքար	Զվարթնոցաղ. 1-ին հարկ վայրէջք հանձնագրային ծառայություն	10
29.	գ. Փարաքար	Զվարթնոցաղ. 2-րդ հարկ թռիչքի անձնագրային ծառայություն	10
30.	գ. Փարաքար	Զվարթնոցաղ. սահմանայինկետ	10
31.	Շիրակաղ.	Շիրակաղ. սահմանայինկետ	2
32.	գ. Փարաքար	Զվարթնոցաղ. Անցագրային շենք տեսախցիկների համար	10

		36.	Նոր-Հաճն	Չարենցի 12	3		
		37.	Վաղարշա-պատ	Մեսրոպ Մաշտոցի 8ա	3		
		38.	Շարժական 3G	8 հատ	3		

2020 թ. Ընթացքում փոխարինվող սարքավորումների ցանկը միավորի նախնական գներով

			Անվանումը	Գինը /դրամ/			
		1	SFP	16000			
		2	Fiber Optic Patch Cord	5000			
		3	Patch Cord	1000			
		4	Cisco ASA	350000			
		5	Cisco router	300000			
		6	Juniper Networks SRX210H-POE 8-Port	75000			
		7	Rack մետաղական պահարան կապի սարքավորումների համար	150000			
		8	UPS 1500VA	250000			
		9	Հոսանքի երկարացման լար 3 մ	4000			
		10	Հոսանքի երկարացման լար 5 մ	5000			
		11	3 G մոդեմներ շարժական ինտերնետ կապով	5000			
		12	GRANDSTREAM GS-GXP1610 IP PHONE	28000			
		13	POE Switch	60000			
		14	GRANDSTREAM HT702	24000			
		15	NanoStation M5	52000			
		16	PowerBeamAC Gen2	76000			
		17	UniFi AP AC LR	62000			
		18	Mikrotic	41000			

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	Ավարտը
01.01.2020թ.	20.12.2020թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011021947
ՀՎՀՀ 01533334

Ա. Սումբատյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(լիազորություն)

ԿԱՏԱՐՈՂ

<<ՖՎ&Գ>> ՍՊԸ
ք. Երևան, Ազատության 24, 4 շինություն
<< ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 25000105200110
ՀՎՀՀ 03004979

Վ. Ղազարյան
/տնօրեն/
(լիազորություն)

Հավելված 3
ՀՀ ֆինանսների նախարարի
2017 թվականի հուլիսի 18-ի
N 356-Ն հրամանի

«Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2017 թվականի մայիսի 20-ի
N 230-Ն հրամանի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրիհամարը՝ _____

ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմքընդունելովպայմանագրիկատարմանվերաբերյալ « » « » 20 թ. դուրսգրված N _____հաշիվապրանքագիրը, կազմեցինտույնարձանագրությունը հետևյալիմասին.

ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրիկողմըկատարելէհետևյալաշխատանքները, կամմատուցելէհետևյալծառայությունները, կամմատակարարելէհետևյալապրանքները՝

Մատակարարվածապրանքների, կատարվածաշխատանքների, մատուցվածծառայությունների

դա-	քանակականցուցանիշը		կատարմանժամկետը		Վճարման
	ըստպայմանագրովհաստատվածգնմանժամանակացույցի	փաստացի	ըստպայմանագրովհաստատվածգնմանժամանակացույցի	փաստացի	/հա

Սույնարձանագրությաներկկողմհաստատմանհամարհիմքհանդիսացածհաշիվապրանքագիրընդունականեզրակացությունըհանդիսանումենսույնարձանագրությանբաղկացուցիչմասնկցվումեն:

Ծառայությունըհանձնեց	Ծառայությունըընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2020 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվումէ, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդիանվանումը Վաճառողիանվանումը
(այսուհետ՝ Վաճառող)միջև 20 թ. _____ -ին կնքված N_____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ապրանքի		
անվանումը	չափմանմիավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն